ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/14 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Երևան

«26» դեկտեմբերի 2023թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«30» նոյեմբերի 2023թ. թիվ 878** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Շիրակի մարզի Ջրափի բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/14** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Արմեն Դանիելյան ՝ Հանձնաժողովի նախագահող
Լիլիթ Պետրոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արաքսյա Իսախանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.1 «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ, «Դակշին» ՍՊԸ, «Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ ՀԳ կազմակերպությունների (այսուհետ՝ Մասնակիցներ) կողմից ներկայացված հայտերը՝ կից փաստաթղթերով, ենթակա են հետագա գնահատման:

2. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ, «Դակշին» ՍՊԸ, «Հրշեջ Շահ-Ար» ՍՊԸ ՀԳ	1,531,105,875.374 Մեկ միլիարդ հինգ հարյուր երեսունմեկ միլիոն հարյուր հինգ հազար ութ հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ և երեք հարյուր յոթանասունչորս լումա	306,221,175.075 Երեք հարյուր վեց միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար հարյուր յոթանասունհինգ ՀՀ դրամ և յոթանասունհինգ լումա	1,837,327,050.449 Մեկ միլիարդ ութ հարյուր երեսունյոթ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար հիսուն ՀՀ դրամ և չորս հարյուր քառասունինը լումա	առկա է

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները (Հավելված 2) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովումները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

3.1 Մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակցի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, սակայն հայտին կից առկա չէ որևէ այլ փաստաթուղթ՝ տվյալների իսկությունը ստուգելու համար, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

3.2 համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ներառել են նաև հայտի ապահովումներ՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված երաշխիքները Մասնակիցների կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով,

ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված երաշխիքի թողարկման իսկությունը:

4 Հանձնաժողովը որոշեց.

4.1 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ Մասնակիցների՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

4.2 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակիցների բանկային երաշխիքների իսկությունը:

5 *Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը*

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 2024 թվականի հունվարի 12-ին, ժամը 12:30-ին:

Հանձնաժողովի

նախագահող՝

Արմեն Դանիելյան _____

անդամներ՝

Լիլիթ Պետրոսյան _____

Արաքսյա Իսախանյան _____

Լուսինե Ղազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

քարտուղար՝

Լիլիթ Սեդրակյան _____